ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

09 սեպտեմբերի 2020 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 (յոթ) անդամներ:

Բացակա էին Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը, Արգամ Շառյանը և Վարդան Սուքիասյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ, Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավարի պարտականությունները կատարող Անդրանիկ Եղիազարյանը, Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավար Մուշեղ Հարությունյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են յոթը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

Մինչև օրակարգի հարցերը լսելը աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը ավագանու անդամներին հրապարակեց ավագանու նիստերից Գեորգի Աղաջանյանի ներկայացրած բացակայության վերաբերյալ տեղեկանքը: Նա 12.05.2020թ. նիստից բացակայել է աշխատանքի բերումով քաղաքից բացակայելու պատճառով:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 7 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ *ավագանին որոշում է.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի սեպտեմբերի 09-ի թիվ 7 հերթական նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվության մասին:

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 37-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԳԻՍ ՂԱՋԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ ***ավագանին որոշում է.***

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման կիսամյակային հաշվետվությունը՝ համաձայն ***հավելվածի***:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 38-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Աշոտ Գարեգինի Պապյանի դիմումը՝ ***ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի «Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N 73 բանակարանն անհատույց Աշոտ Պապյանի ընտանիքին օտարելու մասին» N 76–Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում «Աշոտ Պապյանի ընտանիքին» բառերը փոխարինել «Աբգար Աշոտի Պապյանին» բառերով,

2) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոց 49 շենքի 27.93 քմ ընդհանուր մակերեսով 73 բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Աբգար Աշոտի Պապյանին՝ ծնված 1977 թվականի օգոստոսի 20-ին:

3)որոշման 2-րդ կետում «Աշոտ Գարեգինի» բառերը փախարինել «Աբգար Աշոտի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 39-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

1.ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ _____

2.ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ _____

3.ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ _____

4.ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ _____

5.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ _____

6.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ _____

7.ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ Լ. ԱՎՈՒՇՅԱՆ